

Թվի բաժանելիության հայտանիշները

Թվի բաժանելիությունը 2-ի

Թիվը բաժանվում է 2-ի, եթե նրա միավորների կարգում գրված թիվը զույգ է, կամ զրո է:

Օրինակներ`

Առանց բաժանման հաշվեկանոնից օգտվելու կարող ենք ասել, որ 46,102 թվերը բաժանվում են 2-ի, քանի որ նրանց միավորների կարգում գրված թիվը զույգ է, 100-ը նույնպես բաժանվում է 2-ի, քանի որ նրա միավորների կարգում գրված թիվը 0 է:

Ստուգում` $46:2=23$

$$102:2=51$$

$$100:2=50$$

Թվի բաժանելիությունը 5-ի

5-ի բաժանվում է այն թիվը, որի գրառումը վերջանում է 0-ով կամ 5-ով:

Օրինակներ`

Առանց բաժանման հաշվեկանոնից օգտվելու կարող ենք ասել, որ 105, 165 թվերը բաժանվում են 5-ի, քանի որ նրանց գրառումը վերջանում են 5-ով:

Ստուգում` $105:5=21$

$$165:5=33$$

100-ը բաժանվում են 5-ի, քանի որ նրա գրառումը վերջանում է 0-ով:

Ստուգում` $100:5=20$

Թվի բաժանելիությունը 9-ի

Եթե թվի կարգերում եղած թվերի գումարը բաժանվում է 9-ի, ապա թիվը ևս բաժանվում է 9-ի:

Օրինակ`

Պարզենք 2277 թիվը բաժանվում է 9-ի:

$$2+2+7+7=18$$

$18:9=2$, ուստի բաժանվում է:

Ստուգում`

	2	2	7	7	9														
-	1	8			2	5	3												
		4	7																
	-	4	5																
			2	7															
			-	2	7														
				0															

Թվի բաժանելիությունը 4-ի

Եթե թվի գրառման մեջ վերջին երկու թվանշանները 0-ներ են կամ կազմում են 4-ի բաժանվող թիվ, ապա տրված թիվը բաժանվում է 4-ի:

Օրինակ`

2600 թիվը բաժանվում է 4-ի, քանի որ թվի գրառման մեջ վերջին երկու թվանշանները 0-ներ են:

Ստուգում

	2	6	0	0	4														
-	2	4			6	5	0												
		2	0																
	-	2	0																
			0																

2940 թիվը բաժանվում է 4-ի, քանի որ թվի գրառման մեջ վերջին երկու թվանշանները՝ 40-ը, կազմում են 4-ի բաժանվող թիվ, $40:4=10$

Ստուգում

	2	9	4	0	4														
-	2	8			7	3	5												
		1	4																
	-	1	2																
			2	0															
		-	2	0															
				0															

Առաջադրանքներ

Դասագրքի էջ126 -ի առաջադրանքներ՝ 919-935:

